ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 մարտի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

44
(2894)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ Է ՀԱՄՈՒՆԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԳՆ արարողակարգի ղեկավար Գագիկ Վանոյանը, որը թիկնապահից դարձել է պետական արարողակարգի ղեկավար՝ չունենալով դիվանագիտական կրթություն, փորձում է 44 պետությունները ներկայացնող պատվավոր հյուպատոսների հետ անտեղի սրել հարաբերությունները: Նա նամակներ է ուղարկում ոստիկանություն, որպեսզի ստուգման ենթարկվեն պատվավոր հյուպատոսների կողմից շահագործվող՝կարմիր համարանիշներով մեքենաները:

Հյուպատոսական հիմնարկների կողմից օգտագործվող մեքենաների 2 համարանիշներից մեկը նա ջանում է անվավեր ճանաչել՝ ըստ էության խանգարելով հյուպատոսական հիմնարկների բնականոն աշխատանքը, անտեսելով Վիեննայի կոնվենցիան հյուպատոսական կապերի մասին եւ ֆակուլտատիվ արձանագրությունները:

Նկատենք, որ պաշտոնային ոչ հարիր այդ պահվածը ազդելու է Հայաստանի Հանրապետության կողմից արտերկրում նշանակված 51 պատվավոր հյուպատոսների գործունեության վրա:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Գագիկ Վանոյանը Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի նախագահն է:

Ֆիզկուլտուրնիկ, թիկնապահ եւ դիվանագետ, որը պետք է դիվանագիտական հարաբերություններ պահպանի Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: Նա տարբեր գերատեսչություններից ներկայացուցիչներ է հրավիրում ԱԳՆ, ժողովներ կազմակերպում, փորձում իր կողմից կատարված անտրամաբանական քայլերը արդարացնել եւ Արդարադատության նախարարության միջոցով օրինագիծ մշակել:

Նախագծով առաջարկվում է սահմանել նաեւ պատվավոր հյուպատոսներին պատկանող տրանսպորտային միջոցների հաշվառման եւ հաշվառումից հանելու կարգին առնչվող դրույթներ, սահմանել վերջիններիս հատկացվող հաշվառման համարանիշերի տեսակները՝հստակ կանոնակարգելով, որ վերջիններիս տրանսպորտային միջոցներին հատկացվելու են լատիներեն «H» տառը պարունակող կարմիր հիմնագույնի համարանիշեր, ընդ որում՝ յուրաքանչյուր պատվավոր հյուպատոսի մասով հատկացվելու է մեկական կարմիր հիմնագույնի համարանիշ, եւ այնպես անել, որ վատթարանա հյուպատոսական հիմնարկների աշխատանքը:

Վերջում հիշեցնենք Վիեննայի կոնվենցիան՝հյուպատոսական կապերի մասին, եւ ֆակուլտատիվ արձանագրությունները.

1. ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ՝ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ.

Կատարված է Վիեննայում 1963 թվականի ապրիլի 24-ին (Հոդված 72) ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՅԼ ՉՏԱԼԸ

1. Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառելիս նստավայր պետությունը չպետք է խտրականություն ցուցաբերի տարբեր պետությունների նկատմամբ (մի պետության ներկայացուցիչներին տրամադրում են 100-ից ավելի համարանիշներ, իսկ 44 պետություն ներկայացնող պատվավոր հյուպատոսներին՝ընդամենը 2-ական համարանիշ, հիմա էլ ուզում են դարձնել 1 համարանիշ՝խանգարելով հյուպատոսական հիմնարկների բնականոն աշխատանքը): Նշենք նաեւ, որ 2018թ. այս բազմաթիվ պատվավոր հյուպատոսները միացան հեղափոխությանը, բայց խաբվեցին նաեւ նրանք:



Ինչպես արդեն հայտնի է, շաբաթ օրը՝մարտի 23-ին, իշխանական վերնախավը, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, գնացել էր Գյումրի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Գյումրիում ՔՊ-ականներին շատ «ջերմ» ընդունելություն են ցույց տվել տեղացիները: Փաշինյանի ավտոշարասյանը վարորդները մեքենայի ձայնային ազդանշաններով ու սուլոցներով են ուղեկցել: Նախ այդ օրը Գյումրու կենտրոնական փողոցները փակ են եղել, Փաշինյանի գալու առիթով պարեկները Գյումրիում «կանգնեցրել են» շարժը, ինչը եւս բարկացրել է տեղացիներին, ու այդ պատճառով նաեւ քաղաքացիները եւ պարեկները բախվել են, ընդհարումներ ունեցել: Գյումրիում տեղի էր ունեցել նաեւ ՔՊ նախաձեռնող խմբի նիստը: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Փաշինյանը Գյումրիում գրեթե նույն սպառնալից ու չհուսադրող հայտարարություններն է արել, ինչ Տավուշում: Ասել է, որ այլընտրանք չունենք, պետք է Ադրբեջանի պահանջած տարածքները տանք, որպեսզի պատերազմ չլինի: Միեւնույն ժամանակ նա երաշխիք չի էլ տվել, որ եթե Ադրբեջանի հերթական ապօրինի պահանջը կատարենք, ապա պատերազմ չի լինի:



Երեկ հայտնի դարձավ, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը նոր կուսակցություն է հիմնել՝ «Նոր ուժ»: Նոր ստեղծվող կուսակցության համագումարը մայիսի 1-ին է լինելու: Հայկ Մարությանը դեռ ամիսներ առաջ՝ ավագանու անդամի մանդատից զրկվելուց հետո էր հայտարարել, որ չի հեռանալու քաղաքականությունից, պատրաստվում է նոր կուսակցություն հիմնել եւ մասնակցել առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Իսկ ովքե՞ր են ընդգրկված Հայկ Մարությանի կուսակցությունում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայկ Մարությանի նոր կուսակցությունում ընդգրկված են լինելու ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամների մեծամասնությունը՝ Արամ Թորոսյանը, Հովսեփ Կուբաթյանը, Գրիգոր Երիցյանը, Քրիստինա Վարդանյանը եւ այլոք: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ որքան էլ անսպասելի է, բայց Իզաբելլա Աբգարյանը չի լինի «Նոր ուժ» կուսակցությունում: «Ես անպայման աջակցելու եմ իմ թիմակիցներին, բայց ես որեւէ կուսակցության երբեւէ չեմ անդամակցել: Այս փուլում նախընտրում եմ կենտրոնանալ ավագանիում մեր խմբակցության գործունեության եւ քաղաքի խնդիրների վրա»,- մեզ հետ զրույցում ասաց նա: Ի դեպ, Մարությանի թիմակիցները մեզ հետ զրույցում չբացառեցին նաեւ, որ ինչ-որ փուլում, հնարավոր է, դաշինքի ֆորմատով համագործակցեն «Ազգային առաջընթաց» կուսակցության հետ, որի կազմով մասնակցեցին ավագանու վերջին ընտրություններին:

Թեեւ ՀՀ բանակային կորպուսի հրամանատար Հայկազ Բաղմանյանի նկատմամբ հարուցվել են տարատեսակ քրեական գործեր, սակայն դրանք չեն հաստատվում: Մասնավորապես, 2021թ. «Սեյրան Խալաթյան» ՍՊԸ-ի տնօրենը Բաղմանյան եղբայրների դեմ հաղորդում տվեց ունեզրկման, մարդու առեւանգման եւ շորթման հատկանիշներով: Տարիներ անց սույն հաղորդումը չհաստատվեց, օրերս էլ պարզ դարձավ, որ ՍՊԸ տնօրենը բանկերին պարտք է աստղաբաշխական գումարներ: Հավանաբար, հեղափոխությունից հետո հարմար առիթ էր նախկինների մեջ մեղավոր փնտրել եւ պարտքերը «գրել» նրա վրա: Իրականում նա պարտքեր է կուտակել, եւ չի բացառվում՝ դրա պատճառով է ողջ պրոցեսը:

ԶՐՈՒՅՑ

«ԴՈՒՔ ՀԱՎԻԿ ԵՔ, ՈՆՑ ՈՒԶԵՆ, ԿՎԵՐԱԲԵՐՎԵՆ»

«Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանն ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է Տավուշում ստեղծված իրավիճակի եւ նոր պատերազմի հավանականության մասին:

-Պարոն Եղիազարյան, ի՞նչ զարգացումներ են հնարավոր Տավուշում. Ադրբեջանը նոր պահանջներ է դրել, չորս գյուղ է պահանջում, ու իշխանությունն էլ կարծես չի պատրաստվում պայքարել, ասում են՝ պետք է սահմանագծում արվի:

-Դե գիտեք, եթե մի հողակտոր, մի հայրենիք տեր չունի, ամեն ինչ էլ սպասեք՝ եւ չորս գյուղերը, եւ էն մյուս գյուղերը, եւ Զանգեզուրի միջանցքը: Բանն այն է, որ տվյալ իշխանությունը կարծում է, համոզված է, որ իր արածի համար պատասխան չի տալու, ինչպես պատասխան չտվեցին այս երկիրը թալանողները, ժողովրդի ողնաշարը կոտրողները, ազգային գաղափարախոսությունը սպանողները: Նույն ձեւ մտածում է սա, որ ոչ մի բանի համար պատասխան չի տալու, կտան կգնա: Իրենց համար հայրենիքը կարեւոր չէ:

-Բայց որ տան, Ադրբեջանը կհանդարտվի՞, նոր պահանջներ չի՞ դնի:

-Բացարձակապես, ախորժակը ավելի կմեծանա, կուզի ուրիշ բաներ՝ Զանգեզուրի միջանցք եւ այլն: Հասկանո՞ւմ եք, եթե չտանք, պատերազմ չի լինելու, եթե տանք, լինելու է, հայ ժողովրդին ստրկացնելու են, հայ ժողովուրդը դառնալու է այստեղի փալասը: Ադրբեջանը դա է անում Թուրքիայի հետ, իսկ մենք չենք դիմադրում դրան, աշխարհն էլ չի խառնվում, ասում է՝ եթե հայերը դա ուզում են, ուրեմն այդ տեսակն են մարդու, այդ ժողովուրդն են:

-Հանրության անտարբերությունը ինչո՞վ կբացատրեք:

-Անտարբերությունը 30 տարվա հալածանքների, ստորացումների, 30 տարի ազգային գաղափարախոսությունը փշրելու հետեւանք է, երբ որ քո գլուխգործոց նախագահներից մեկն ասում է, որ մեր պաշտպանվածությունը մեր անպաշտպան լինելու մեջ է. դուք թռչուն եք, հավիկ եք, ձեզ հետ ոնց ուզեն կվերաբերվեն, դա է ձեր պաշտպանվածությունը, դուք եզ եք, գնացեք ձեր մի կտոր խոտը կերեք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՀՀ կառավարությունը հաստատեց մի որոշում, որով շարունակվելու է բռնի տեղահանված արցախցիներին տրվել բնակվարձի եւ կոմունալ ծախսերի համար 50,000 դրամ ամսական աջակցություն մինչեւ տարեվերջ:

Արցախի նախկին ՄԻՊ, նախկին պետնախարար Արտակ Բեգլարյանի գնահատմամբ՝ լավ է, որ այս ծրագրում վերջապես ներառվել են նաեւ 2020թ. տեղահանված անձինք՝ բացառությամբ 2022թ. ընդունված բնակարանային ծրագրի շահառուների:

«Ողջունելի է այս որոշումը, որին բոլոր տեղահանվածներն են սպասել՝ որպես առկա կարիքների մասնակի բավարարման միջանկյալ ու կարեւոր միջոց: Այս որոշման արդյունքում որոշակիորեն նվազելու է նոր թափ առած արտագաղթի ալիքը:

Սա հերթական օրինակն է, թե ինչպես հանրության համախմբումն ու հավաքական ձայնի արդարացի բարձրացումը կարող է հաջողություն ապահովել: Այս որոշումն ակնհայտորեն Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնության մեկնարկած պայքարի արագ արդյունքներից է, քանի որ նախքան մեր պայքարի մեկնարկը ՀՀ իշխանությունները քանիցս հայտարարել էին, որ ապրիլից նշանակալիորեն կրճատելու են ծրագիրը՝ աջակցություն տրամադրելով միայն երեխաներին: Այնինչ երբ զգացին հանրային հիմնավոր ու լայն ճնշումը, լրիվությամբ վերանայեցին իրենց մտադրությունները եւ ընդունեցին ավելի ներառական ու արդար ծրագիր, քան նույնիսկ այս վեց ամսվա ընթացքում գործող ծրագիրն է:

Թեեւ մեր պայքարի ու հանրային ճնշման արդյունքում որոշակի դրական միտումներ են նկատվում նաեւ բնակարանային սպասվող ծրագրի կանխավ հայտարարված մոտեցումների վերանայման հարցում, սակայն դեռ մի շարք սկզբունքային խնդիրներ լուծման կարիք ունեն: Դրանց եւ մեր հիմնարար դիրքորոշումներին կարելի է ծանոթանալ մարտի 20-ի հանրահավաքում ընդունված մեր հայտարարության տեքստում: Սակայն ամենակարեւորն այն է, որ բոլոր մարդասիրական ծրագրերը պետք է սպասարկեն Արցախ մեր հավաքական, անվտանգ ու արժանապատիվ վերադարձի տեսլականին, որի ուղղությամբ նույնպես ՀՀ կառավարությունը կարեւոր անելիքներ ունի: Վերջիվերջո, բուն խնդիրը քաղաքական է՝ բխելով մեր հավաքական իրավունքներից ու շահերից, սակայն ոչ զուտ մարդասիրական կարիքներից:

ՀՀ կառավարությունն ու միջազգային կազմակերպությունները դեռեւս լրջագույն խնդիրներ ունեն Արցախի ժողովրդին վերաբերող որոշումների կայացման ներառականության հարցում՝ հաճախակի կամ ընդհանրապես չապահովելով ներառականություն, կամ կեղծ ու ձեւական ներառականություն խաղալով: Ինչու՞ պետք է սխալ ու թերի որոշումներ կայացվեն առանց մեր հանրության ու Արցախի պետական մարմինների կարծիքներն ու առաջարկները հաշվի առնելու, հետո բախվեն լայնածավալ բացասական հետեւանքների ու հանրային դժգոհության՝ ստիպված մտածելով սխալները սրբագրելու մասին...

Նախաձեռնությունն էլ, վստահ եմ, շարունակելու է իր պայքարը Արցախի ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանության համար՝ չնայած տարաբնույթ ու բազմաղբյուր շահարկումներին, դժվարություններին ու ճնշումներին»:

ԽՆԴԻՐՆԵՐ ԿԼԻՆԵ՞Ն

«Քննարկումներ միշտ լինում են, Հայաստանը հաշվի է առնում բոլոր օգուտներն ու վնասները, որոնք կարող են լինել որեւէ որոշման դեպքում: Այս պահին մենք ԵԱՏՄ անդամ ենք, կատարում ենք մեր պարտավորությունները, վճարում ենք ընդհանուր մաքսատուրքերը ԵԱՏՄ բյուջեին եւ այնտեղից ստանում մեր բաժինը, ընդ որում՝ շատ ավելի քիչ, քան վճարում ենք»,- մարտի 28-ին՝ ՀՀ ԱԺ-ում հրավիրված մամուլի ասուլիսին, նշեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ տնտեսական հանձնաժողովի փոխնախագահ Բաբկեն Թունյանը՝ անդրադառնալով լուրերին, ըստ որոնց՝ ԵՄ-ին անդամակցության հայտ ներկայացնելու միասնական համաձայնության չկա ՔՊ խմբակցությունում՝ հաշվի առնելով մտահոգությունները, որ Հայաստանի տնտեսությունը կապված է ՌԴ հետ, ու կարող են խնդիրներ առաջանալ:

Նա նշեց, որ զուգահեռաբար նաեւ Եվրամիության եւ այլ շուկաների ինտեգրման ուղղությամբ են աշխատում: «Այս պահին ինչ-որ առարկայական, կտրուկ գործողության մասին խոսք չկա: Եթե լինի ռեալ խոսակցություն, կլինի համապատասխան հայտարարություն եւ կմունիկացիա»,- ասաց Թունյանը:

ՔՊ-ական պատգամավոր Մարինա Կարապետյանն էլ հավելեց, որ երկրները երբեք ինքնուրույն որեւէ շուկայից չեն հրաժարվում, եթե կոնկրետ քաղաքական դրդապատճառ չկա: «Հետեւաբար, ինչո՞ւ Հայաստանը պետք է ինքնուրույն գնա սահմանափակման իր շուկաների: Խոսքն այլ բանի մասին է, որ Հայաստանը պետք է ընդլայնի, դիվերսիֆիկացնի իր շուկաները: Այդ ուղղությամբ ենք մեր շարժվում: Եթե այնպես կստացվի, որ մի շուկա ավել կբացվի, հրաշալի է, եթե մի շուկա ավելի սահմանափակ կդառնա, ապա ավելի ինտենսիվ պետք է այլընտրանքային շուկաներ փնտրենք: Սա է տնտեսության տրամաբանությունը»,-ասաց նա:

ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Բուրսայում կայացած հանրահավաքի ժամանակ խոսել է տարածաշրջանում Թուրքիայի քայլերի դեմ միջազգային ուժերի հակազդեցության մասին:

Թուրքական TRT-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, թե Թուրքիայի գործողություններին Սիրիայում, Լիբիայում, Միջերկրական ծովում եւ Ղարաբաղում հակազդել են միջազգային ուժերը: Նա պնդել է, թե Թուրքիան իր սեփական ուժերով եւ պայքարով կարողացել է հաջողության հասնել այդ տարածաշրջաններում:

«ՀԱՅՓՈՍՏ»-Ի ԱՊԱԳԱՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է «Հայփոստ» ազգային օպերատորի զարգացման ռազմավարության նախագիծը: Այդ մասին հայտնում են կառավարությունից:

«Հայփոստ»-ի գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանը խոսել է կատարված աշխատանքների, ֆինանսական եւ որակական ցուցանիշների ու զարգացման տեսլականի մասին: Նշվել է, որ ռազմավարությունը մշակվել է միջազգային փորձի ուսումնասիրության եւ աշխարհում փոստային ոլորտի փոփոխությունների հիման վրա: Ընդգծվել է, որ ռազմավարական նպատակների իրականացմամբ ակնկալվում է ստեղծել արդիական լուծումներով փոստային ցանց, թվային լուծումներով փոստային ծառայություններ, ապահովել փոստային-ֆինանսական ծառայություններ եւ այլն:

Նախագծի շուրջ ծավալվել է մտքերի փոխանակություն, ներկայացվել են կարծիքներ՝հայեցակարգային հարցերի շուրջ:

Վարչապետը պատասխանատուներին հանձնարարել է մշակել նախագծում նշված ռազմավարական նպատակների իրականացման ֆինանսական սխեմա, որի շուրջ առավել առարկայական կշարունակվեն «Հայփոստ»-ի զարգացմանն ուղղված քննարկումները:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

ՄԻԵԴ-ը նախնական ընդունել է Արթուր Դանիելյանի ու Արմեն Աշոտյանի գործերով գանգատները: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

«Այսօր Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացա երկու ծանուցում՝ իմ կողմից ներկայացված գանգատները նախնական ընդունելու մասին (դա գործնականում նշանակում է, որ որոշ ժամանակ անց գործերով կսկսի կոմունիկացիան՝ կողմերին հարցեր ուղղելը):

Այդ գործերն են Արթուր Դանիելյանի գանգատը՝Ալեն Սիմոնյանին ապօրինաբար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ (հայտնի միջադեպի գործով), եւ Արմեն Աշոտյանի գանգատը՝ իրեն իրավասություն չունեցող դատարանի կողմից կալանավորելու մասին (Հակակոռուպցիոն դատարանը իրավասու չի եղել քննելու մինչդատական վարույթի, այդ թվում՝ կալանքի գործերը): Հուսամ՝ մի օր արդարադատությունը կվերականգնվի, եւ Ալեն Սիմոնյանը, նրան քրեական պատասխանատվությունից ազատած Ս. Խաչատրյանի աշխատակիցները, դատախազները եւ այդ ամենին կնիք դրած դատավորները, Հակակոռուպցիոն դատարանի դատավորներ Ս. Դադոյանը, Գ. Հովհաննիսյանը եւ Ա. Նահապետյանը կենթարկվեն օրենքով նախատեսված պատասխանատվության»,- նշել է նա:

ՀԵՌԱՑՎՈՒՄ ԵՆ

ՈՐՈՇԵԼ Է «ՉԻՍՏԿԱ» ԱՆԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը որոշել է «չիսկա» անել ՔՊ-ում: Առաջիկայում կուսակցության ստորին էշելոններից հեռացվողներ կլինեն:

2 օր առաջ հերթական ՔՊ-ականն էր հեռացվել ՔՊ-ից՝ Սեւակ Տիգրանյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Սեւակ Տիգրանյանը Կոտայքի մարզպետի խորհրդականի պաշտոնն է զբաղեցրել:

Ֆեյսբուքյան իր գրառումներով նա պարբերաբար «անվերապահորեն» աջակցել է Նիկոլ Փաշինյանին եւ նրա հեղափոխական թիմին:

Նախորդ տարի եւս մի շարք ՔՊ-ականներ հեռացվեցին կուսակցությունից:

Նախորդ տարեվերջին իր սկանդալային վարքագծի եւ թիմակիցների հետ մշտապես ունեցած վեճերի պատճառով թիմից հեռացվել էր Թաթուլ Ասիլյանը:

ՔՊ-ից մեզ պաշտոնապես հայտնել էին, որ հեռացման պատճառը կարգապահական խախտումն է եղել, մինչդեռ Թաթուլ Ասիլյանը մեզ հետ զրույցում ասել էր, թե Արցախից բռնի տեղահանվածների մասին գրառում է արել ու հենց այդ պատճառով էլ հեռացվել է կուսակցությունից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նա ոչ այնքան կարկառուն ՔՊ-ականների հետ մշտապես խնդիրներ է ունեցել, հաճախ վիճել է նրանց հետ, ՔՊ-ականներն էլ պարբերաբար վարչության անդամների մոտ դժգոհել են Ասիլյանից ու պատմել նրա անվայելուչ պահվածքի մասին: Ի վերջո, Նիկոլ Փաշինայնն էլ վարչության անդամների հետ քննարկումների արդյունքում որոշել է հեռացնել նրան:

Կուսակցությունից հեռացվել էր նաեւ Սարգիս Ալեքսանյանը:

Վերջինս ՔՊ կուսակցության ակտիվ անդամ էր, մտերիմ էր եւ հաճախ էր լուսանկարներ հրապարակում ՔՊ վերնախավի հետ, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի հետ:

Սարգիս Ալեքսանյանը 2019թ.-ին մասնակցել էր նաեւ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած՝ դատարանների մուտքերը փակելու ակցիային: ՔՊ-ականը հրել եւ գցել էր դատավորներից մեկին եւ անպատիժ էր մնացել:

Սարգիս Ալեքսանյանը 2021թ.-ին սոցցանցի իր էջում հայհոյել էր մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանին լրագրողին աջակցություն ցուցաբերելու համար եւ կրկին չէր պատժվել:

ՔՊ կուսակցությունից հեռացված մյուս անդամը՝Արտուշ Եղիազարյանը, Երեւանի ավագանու վերջին ընտրություններում ընդգրկված է եղել ՔՊ ցուցակում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՔՊ-ականների հեռացման հիմնական պատճառը նրանց հղփացած պահվածքն է:

Բանն այն է, որ ոչ կարկառուն ՔՊ-ականները, պարբերաբար օգտվելով իրենց կուսակցական պատկանելիությունից, շատ հաճախ աչքի են ընկել իրենց գռեհիկ պահվածքով ու հայտարարություններով:

ՔՊ-ականներն էլ պարբերաբար Նիկոլ Փաշինյանին զեկուցել են, թե ինչ է կատավում թիմում, ու ինչպես են իրենց դրսեւորում, այսպես ասած, ոչնչով աչքի չընկած ՔՊ-ականները:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը մարտի 27-ին ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակությանը: Այս մասին հայտնում են ՀՀ ԱԺ-ից:

Հանդիպման սկզբում Ալեն Սիմոնյանը շնորհակալություն է հայտնել ֆրանսիացի գործընկերներին Հայաստան այցելության համար եւ նշել, որ նման այցերը մեծ քաղաքական եւ անվտանգային նշանակություն ունեն:

Անն-Լորանս Պետելը բարձր է գնահատել Հայաստանի հետ հաստատված միջխորհրդարանական հարաբերությունները եւ ընդգծել, որ մեծաքանակ բարեկամական խմբի կազմում ներկայացված են բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները, որոնք ունեն Հայաստանին աջակցության վերաբերյալ կոնսենսուս:

Անդրադառնալով Հայաստան-ԵՄ համագործակցությանը՝ կողմերն ընդգծել են հարաբերությունների զարգացման դրական դինամիկան:

«Հայաստանը խորապես կարեւորում է ԵՄ դիտորդական առաքելության տեղակայումը Հայաստան-Ադրբեջան սահմանին: Այն մեծ նշանակություն ունի տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հաստատման հարցում»,- նշել է ԱԺ նախագահը:

Ալեն Սիմոնյանը ֆրանսիացի գործընկերներին է ներկայացրել Հարավային Կովկասում առկա անվտանգային իրավիճակը, ԼՂ-ից տեղահանված անձանց հումանիտար խնդիրները, Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձի հարցը: Քննարկվել են Հայաստան-Ֆրանսիա համագործակցության զարգացման հեռանկարները միջխորհրդարանական, ինչպես նաեւ անվտանգային, տնտեսական եւ այլ ոլորտներում:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբի ղեկավար Վլադիմիր Վարդանյանը:

ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏՎԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ազգային ժողովում հյուրընկալեցի ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետի 4- րդ կուրսի ուսանողներին:

Հանդիպման մասնակիցների հետ քննարկեցինք տարածաշրջանում առկա անվտանգային խնդիրները:

Խոսեցինք իշխանության վարած քաղաքականության արդյունքում թույլ տրված լրջագույն բացթողումների, հայ-ռուսական հարաբերությունների վատթարացման, «Իմ քայլը» խմբակցությունից դուրս գալու իմ որոշման եւ պատճառների մասին:

Անդրադարձա նաեւ ներկայիս իշխանության կողմից օկուպացված խորհրդարանական համակարգին, որի արդյունքում լրջագույնս ձեւախեղվել է խորհրդարանական կառավարումը:

Հանդիպման ավարտին ուսանողներին խորհուրդ տվեցի, որ, որպես ապագա քաղաքական առաջնորդներ, գերակա համարեն բացառապես պետական շահը եւ ոչ ոքի թույլ չտան հատել այն կարմիր գծերը, որոնք կհանգեցնեն պետության դիրքերի թուլացման»:

ՕՐԱԿԱՐԳԸ ԱՆՀԱՅՏ Է

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Սարգիս Խանդանյանը եւ Մարիա Կարապետյանի կգործուղվեն Բեռլին:

ArmLur.am-ը ԱԺ-ից տեղեկացավ, որ պատգամավորները Բեռլին գործուղման են մեկնելու ապրիլի 18-21-ը:

Հերթական անգամ ՔՊ-ականների գործուղման օրակարգը անհայտ է. ԱԺ նախագահի համապատասխան որոշման մեջ ոչինչ չկա, թե ՔՊ-ական պատգամավորները Բեռլինում ինչ քննարկումների են մասնակցելու, ինչ հանդիպումներ են ունենալու:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը կկատարվի պետբյուջեի հաշվին:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆՉ ՕՐՍ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՆ ԴԵՊՔԸ

Մարտի 24-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժանմունք ներխուժեցին 3 զինված քաղաքացիներ: Նրանցից 1-ը իրեն պայթեցրած նռնակից վնասվածքներով այս պահին հիվանդանոցում է, իսկ երրորդ անձին ԱԱԾ հատուկ ջոկատայինները վնասազերծեցին 2.5 ժամ անց: Ի՞նչ իրավիճակ է նռնակի պայթյունից 4 օր անց Ներքին գործերի նախարարության Նոր Նորքի ոստիկանության բաժնում:

ArmLur.am-ի նկարահանող խումբը դեպքի վայրում էր:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնեց, որ Ս. Հ.-ն, Վ. Գ.-ն եւ Ա. Մ.-ն, ունենալով հակահիշխանական հայացքներ, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, պետական ծառայող հանդիսացող՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի ծառայողներին իրենց պարտականությունները կատարելուց հրաժարվելուն, ինչպես նաեւ իրենց պահանջները կատարելուն հարկադրելու նպատակով 2024թ.-ի մարտի 24-ին՝ ժամը 17:00-ից 17:15-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի կերպով ձեռք բերած եւ յուրաքանչյուրի մոտ գտնվող ռազմամթերք հանդիսացող երկուական ձեռքի մարտական նռնակներով մուտք են գործել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի վարչական շենք:

Շենքը պայթեցնելու սպառնալիքով, ձեռքերում ցուցադրական պահելով վերը նշված, այդ թվում՝ արդեն մարտական վիճակի բերված նռնակները, վերջիններս հերթապահ մասում ծառայություն իրականացնող ոստիկաններից պահանջել են ազատ արձակել իրենց համախոհներին, բացել հերթապահ մասի դուռը: (խմբ.- նշենք, որ այդ օրը իրավապահները համատարած ձերբակալում էին «Մարտական եղբայրության» անդամներին, որոնք, երկրում առկա վիճակով պայմանավորված, գնացել էին Ոսկեպար):

Նրանք հանդիպել են ոստիկանության ծառայողների դիմադրությանը, ինչի պայմաններում Ա. Մ.-ի ձախ ձեռքում պահված նռնակը ընկել է, ոստիկանության բաժնի հերթապահ մասի դիմացի հատվածը տեղի ունեցած պայթյունի հետեւանքով վնասվել է, իսկ Ս. Հ.-ն, շարունակելով իրենց հանցավոր նպատակին ուղղված գործողությունները, նռնակները ձեռքերին պահած, շուրջ 2 ժամ սպառնացել է պայթեցնել ոստիկանության բաժնի վարչական շենքը եւ ՀՀ-ում իրականացնել հեղափոխություն, սակայն վերջինս վնասազերծվել եւ զինաթափվել է ՀՀ ոստիկանության եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Եվ, ահա, ձեռք բերված փաստերի հիման վրա՝վարույթն իրականացնող մարմինը միջնորդություններ է ներկայացրել հսկող դատախազին՝ առերեւույթ հանցավոր արարքները կատարած երեք անձանց՝ Ս.Հ.-ի, Վ.Գ.-ի եւ Ա.Մ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Դատախազի կողմից հիշյալ միջնորդությունները բավարարվել են, եւ նշված երեք անձանց ներկայացվել է մեղադրանք՝ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (ահաբեկչությունը) եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով (խմբի կազմում հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը) նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ Ս.Հ.-ի եւ Վ.Գ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ, որոնք դատարանի որոշմամբ բավարարվել են:

Ա.Մ.-ն շարունակում է ստացիոնար բուժումը բուժհաստատությունում:

Իրավիճակից 4 օր անց տարածքում ապրող բնակիչները մինչ օրս հիշում են դեպքը ու վերլուծում՝ ինչի հասան կատարողները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴՈՒՍՏՐԸ՝ ՎԹԱՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Խոշոր ու շղթայական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում. «Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանի դուստրը վթարի կիզակետում է հայտնվել: Հղի կնոջ եւ երեխայի են տեղափոխել հիվանդանոց ու վիրահատում են: ArmLur.am-ը զրուցել է Մանվել Եզիազարյանի հետ, որը մանրամասներ պատմեց դեպքից:

shamshyan.com-ը գրել էր, որ մարտի 28-ին խոշոր ու շղթայական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 08:30-ի սահմաններում Երեւանի բնակիչ 51-ամյա Պարույր Բաբայանը իր վարած «Toyota» մակնիշի ավտոմեքենայով Խորենացի փողոցում՝ ոստիկանության էրեբունու բաժնի հարեւանությամբ, բախվել է «Mercedes» մակնիշի ավտոմեքենային, ապա մոտ 500 մետր առաջ ընթանալով՝ բախվել է «Nissan Tiida» եւ «Hyundai» մակնիշի ավտոմեքենաներին:

Վթարի հետեւանքով 2 հոգի, որոնց առաջինն օգնության են հասել քաղաքացիներն ու ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երեւանի թիվ 16 փրկարարական ջոկատի փրկարարներն ու Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը, տեղափոխվել են՝ 12-ամյա երեխան՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն, իսկ նրա մայրը՝ «էրեբունի» բժշկական կենտրոն:

ԹԱԼԱՆԵԼ ԵՆ «ԶԻԳԶԱԳԸ»

Օրեր առաջ Երեւանում թալանել են Սայաթ-Նովա պողոտայում գործող հայտնի «Զիգզագ» խանութը. հայտնում է shamshyan.com-ը:

Մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել Ռոբերտ Կ.-ից, որը հայտնել է, որ նույն օրը՝ժամը 05.30-ից 05:40-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը ոտքով կոտրել է Սայաթ-Նովա 20 հասցեում գործող «Զիգզագ» խանութի մուտքի ապակյա դուռը, մտել ներս եւ այնտեղից հափշտակել տարբեր տեսակի 13 բջջային հեռախոս:

«Զիգզագ» խանութ-սրահի տնօրենի տեղակալ Արթուր Զանոյանը իրավապահներին հայտնել է, որ գողության հետեւանքով պատճառվել է 5 մլն 500 հազար դրամի վնաս:

Դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ, ձեռնարկվում են անհրաժեշտ հետախուզական եւ քննչական համատեղ գործողություններ՝ գողություն կատարած անձի ինքնությունը պարզելու, նրան եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Նկատենք, որ «Զիգզագ» ՍՊԸ-ի ղեկավարը Էդուարդ Աղաջանյանի հայրն է՝Արթուր Աղաջանյանը:

«ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԱՆՀԻՄՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«LSA» փաստաբանական գրասենյակի փաստաբաններ Արսեն Սարդարյանն ու Գուրգեն Ներսիսյանը շարունակում են դեռեւս 2024թ. հունվարի 31-ին ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթով ձերբակալված՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչության պետ Տ.Մ.-ի դատավարական պաշտպանությունը, ում նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում, եւ որպես խափանման միջոց էր ընտրվել կալանքը:

2024թ. նախաքննական մարմնի կողմից դատարան էր ներկայացվել Տ.Մ.-ին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն, որը դատարանի 27.03.2024թ. որոշմամբ ամբողջությամբ մերժվել է (ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարանի դատավոր Տ. Դավթյան), Տ.Մ.-ն շուտով կլինի ազատության մեջ: Միջնորդության քննարկման ժամանակ պաշտպանների կողմից դատարանին ներկայացվել են այնպիսի փաստեր, որոնք ամբողջությամբ բացահայտել են Տ.Մ.-ին կալանքի տակ պահելու անհրաժեշտության եւ հիմքերի բացակայությունը:

Նշված գործով մեղադրանքի անհիմն լինելու մասին պաշտպաններ Արսեն Սարդարյանն ու Գուրգեն Ներսիսյանը արդեն առիթ ունեցել են խոսելու, բայց Տ.Մ.-ի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելուց հետո փաստաբանների կողմից նախաքննությանը գրեթե զուգահեռ «փաստաբանական հետաքննություն» էր իրականացվել, որի շրջանակում ի հայտ են եկել այնպիսի տեղեկություններ, որոնք ամբողջությամբ ապացուցում են Տ.Մ.-ի անմեղությունը: Այդ ապացույցների մի մասը ներկայացվել, իսկ մնացյալը առաջիկայում կներկայացվի նախաքննական մարմնին: Հուսով ենք իրավապահ մարմինները կգտնեն իրենց մեջ խիզախություն, կհռչակեն Տ.Մ-ի անմեղությունը եւ կվերացնեն նրա իրավունքների սահմանափակումները:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 27-ից մարտի 28-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 72 դեպք, որոնցից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆՈՐԻՑ ԴՊՐՈՑ Է ԳՆՈՒՄ

2023թ. աշնանը Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղում բացահայտվել էր 14-ամյա աղջկա հետ գյուղի չափահաս տղամարդկանց սեռական հարաբերություններ ունենալու դեպք, հարուցվել էր քրեական գործ, որի շրջանակներում նույն գյուղի բնակիչ, 58-ամյա եւ 57-ամյա տղամարդկանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը: 14-ամյա աղջիկը կատարվածից հետո դպրոցում ուսումնառությունը թողել էր, տեղափոխվել Բերդ քաղաքում ապրող իր հարազատի մոտ: Այդ աղջկա հետ կատարված դեպքի կապակցությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների, Բերդ համայնքի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, ՄԱԾ Բերդի տարածքային կենտրոնի, ոստիկանության համապատասխան աշխատակիցների եւ համայնքում գործող՝ երեխայի հարցերով զբաղվող ՀԿ-ների ու միջազգային գործընկեր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի էր ունեցել քննարկում, որի ընթացքում քննարկվել էին դեպքի հանգամանքները եւ երեխայի հետ իրականացվելիք առաջնային քայլերը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ 14-ամյա աղջկա հետագա ուսումնառության, նրա բնակության վայրի հետ կապված: Մարզպետարանի պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզի Բերդ բնակավայրի Վ. Կ. Աղբյուրի միջն. դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհու դեմ կատարված ոտնձգությունների հետեւանքով երեխայի բարոյահոգեբանական վիճակի եւ նրա կրթական իրավունքի վերականգնման ուղղությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը իրականացրել է որոշակի աշխատանքներ: Մարզպետի աշխատակազմը մշտապես համագործակցել է Բերդ համայնքի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, դպրոցի տնօրենի, ՆԳՆ ոստիկանության Տավուշի Մ/Վ Տավուշի տարածքային բաժնի ԱԳ եւ ԸԲԿ խմբի տեսուչների եւ համայնքում գործող «Տավուշ» բարեգործական հիմնադրամի հետ: Հետեւողական եւ համատեղ աշխատանքների արդյունքում երեխան վերադարձել է հանրակրթություն: Ներկայումս նա սովորում է Վ. Կ. Աղբյուրի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում, կանոնավոր հաճախում է դասերի: Երեխան բնակվում է Բերդ քաղաքում՝ մայրական կողմի պապիկի տանը: Երեխան տատիկի կամ մորաքրոջ ուղեկցությամբ շաբաթական 3 անգամ հաճախում է «Տավուշ» բարեգործական հիմնադրամ, որտեղ ստանում է սոցիալ-հոգեբանական աջակցություն: Տատիկի եւ ընտանիքի մյուս անդամների հետ տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Երեխայի հոր հետ եւս շարունակվում են տարվել ծնողական հմտությունների զարգացման ուղղված աշխատանքներ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽ

«ՀԱՊԱՂԵԼԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԼԻՆԵԼ»

Մարտի 20-ի հանրահավաքից հետո Արցախի ժողովրդի կարիքների աղահովման նախաձեռնությունը դաշտոնական հանրագիր է ուղարկել ՀՀ վարչապետին՝ ներկայացնելով հանրահավաքում ընդունված հայտարարությունը: Մարտի 27-ին նախաձեռնությունը դիմումներ է հղել ՀՀ Ազգային ժողովի երեք խմբակցություններին՝ նրանց ուղարկելով հայտարարությունը եւ առաջարկելով ՀՀ Ազգային ժողովում կազմակերպել խորհրդարանական լսումներ բարձրացված հարցերի շուրջ: Ներկայացնելով հանրահավաքի արդյունքները՝ նախաձեռնությունն ակնկալում է, որ ՀՀ իշխանությունները երկաբաթյա ժամկետում ներառական ու արդյունավետ քննարկումներ կսկսեն եւ հստակ դիրքորոշում կհայտնեն ներկայացված հարցերի շուրջ, որպեսզի հնարավոր լինի ավելի մանրամասն քննարկումներ իրականացնել հետագա անելիքների վերաբերյալ: Հանրագրի մեջ նախաձեռնությունը նշել է նաեւ, որ հետեւողական են լինելու Արցախի ժողովրդի հավաքական իրավունքների պաշտպանության եւ կարիքների բավարարման հարցերում՝ կիրառելով օրինական բոլոր միջոցներն այդ ճանապարհին եւ զերծ մնալով հայ ժողովրդին ու Հայաստանի Հանրապետությանը վնաս հասցնող որեւէ քայլից:

Արդյոք ՀՀ Ազգային ժողովում կբարձրացվե՞ն նախաձեռնության ներկայացրած խնդիրները: ArmLur.am-ը կապ է հաստատել «Հայաստան» խմբակցության անդամ, ԱԺ պատգամավոր Սեյրան Օհանյանի հետ:

«Մենք մշտապես համագործակցում են Արցախի խմբակցությունների հետ: Արցախի վերաբերյալ բոլոր հարցերը, ինչպես գիտեք, մենք Ազգային ժողովում շուտվանից ենք բարձրաձայնում: Սկսած 2021թ. օգոստոսից առաջին հերթին առաջարկել ենք միջխորհրդարանական հանձնաժողովի նիստ անցկացնել, որն այդպես էլ Ազգային ժողովի նախագահը չանցկացրեց: Հիմա էլ, ինչքանով որ տեղյակ եմ, ՀՀ Ազգային ժողովի նախագահը Արցախի ԱԺ ղեկավարությանը չի ընդունում: Ինչ վերաբերում է սոցիալական եւ մնացած, նաեւ քաղաքական խնդիրներին, մեր պատգամավորների կողմից բարձրաձայնվում են եւ՛ հայտարարությունների, եւ՛ հարցուպատասխանի ժամանակ»,- նշեց Սեյրան Օհանյանը:

Անդրադառնալով արցախցիների հնարավոր ետվերադարձին՝ Օհանյանը առանձնացրեց երեք հանգամանք, որ պիտի հաշվի առնվի: «Առաջին հերթին պետք է նշենք, որ հակամարտությունը չի ավարտվել: Ադրբեջանի կողմից «հակաահաբեկչական» գործողությունները, որ իրականացվեց երկարատեւ շրջափակումից հետո, հանցագործություն էր Արցախի ժողովրդի նկատմամբ: Տեղահանման ցեղասպանություն իրականացնելով՝ Ադրբեջանը հակամարտությունն ավելի խորացրեց: Ադրբեջանը միջազգային հանցագործություն կատարեց, որի համար պիտի պատասխան տա: Երկրորդ հերթին պետք է պահպանել Արցախի սուբեկտայնությունը: Արցախի ամբողջ քաղաքական, հասարակական հարթակները պետք է աշխատեն, եւ նրանց աշխատանքի հիմքում պետք է դրված լինի արցախցիների կարգավիճակի, եւ ամենակարեւորը՝ ետվերադարձի միջազգային անվտանգության, ինչպես նաեւ Արցախում կայուն հիմքեր ստեղծելու դրույթները: Մենք տեսնում ենք ետվերադարձի խնդիրը»,- ասաց մեր զրուցակիցը՝ շեշտելով, որ այն լուրջ անվտանգային խնդիր է, որը պետք է ապահովված լինի:

Անդրադառնալով երրորդ հանգամանքին՝ կրկին շեշտեց, որ հակամարտությունը դեռ չի ավարտվել, եւ որ պետք է պահպանել Արցախի սուբյեկտայնությունը:

«Բանակցային գործընթացը՝ կա՛մ հին, կա՛մ նոր, այլընտանք չունի: Այդ առումով Վարդան Օսկանյանի գլխավորությամբ ստեղծվել է հանձնաժողով, որտեղ համապատասխան աշխատանքներ պետք է տարվեն, որպեսզի Արցախի հարցը լուծվի: Այդ ամենի համար, որքան էլ մենք համատեղ աշխատանքային խմբեր ստեղծենք, բավարար չէ: Առաջին հերթին Արցախի իշխանությունը պետք է աշխատի: Այստեղ հապաղելը, ուշացնելը կարող է կործանարար լինել»,- ասաց Սեյրան Օհանյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՏՈՒԳԱՆՔԻ «ՄԱՏԵՐԻԱԼ» ՉԷ

Իշխանությունները փորձում են իրենք իրենց հերքելով արդարացնել եւ պնդել, որ քաղաքացին «տուգանքի մատերիալ» չէ:

Կառավարության դեռ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքների նախագծերին հավանություն տալու եւ անհետաձգելի համարելու մասին հարցը:

Նախագծի էությունը, ըստ Փաշինյանի, հետեւյալն է՝ եթե քաղաքացին 15 օրվա ընթացքում վճարում է տուգանքի կեսը, մնացած կեսը համարվում է վճարված, այսինքն՝ եթե 15 օրվա ընթացքում է վճարում, վճարում է կեսը: Երկրորդը հետեւյալն է. եթե քաղաքացին police.am կայքում գրանցվում է եւ ասում է՝ ինձ ծանուցումները պետք չէ թղթային եղանակով ուղարկել, ինձ ուղարկեք էլեկտրոնային տարբերակով, դրա համար եւս 5 տոկոս զեղչ է ստանում:

Նիկոլ Փաշինյանը հավելեց նաեւ, որ պետք է էլեկտրոնային գրանցման համար զեղչը սահմանել 30 տոկոս, որպեսզի խրախուսեն թվայնացմանը: 15 օրվա ընթացքում վճարելու պարագայում եւս 30 տոկոս զեղչ սահմանել:

Եվ այսպես, նախագիծն ընդունվեց եւ ապրիլի 5-ից այն կկարգավորվի օրենքով: Վճարման պարտականությունը կհամարվի ամբողջությամբ կատարված, բացառությամբ տույժ նշանակելու որոշումը բողոքարկելու դեպքի:

Օրինակ՝ եթե կայացվել է 5000 դրամ տուգանքի նշանակման մասին որոշում, կկիրառվի բոնուսային նվազեցում 30 տոկոսի չափով, եթե 15-օրյա ժամկետում վճարվի 3500 դրամ:

Եթե քաղաքացին 15 օրվա ընթացքում վճարի տուգանքի կեսը, մնացած կեսը կհամարվի վճարված, այսպիսով կարձանագրենք, որ քաղաքացին տուգանքի «մատերիալ» չէ, սակայն այլ կարգավորումներով քաղաքացուն ստիպում են դառնալ տուգանքի մատերիալ, երբ, օրինակ, փողոցն անցնեք հետիոտնային կանաչ լույսը կարմիրի փոխվելու պահին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 3 մարդ զոհվել է, 29-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԾԱՌԵՐԻ ՍՊԱՆԴ Է

Մեկ հոգի որոշում է համայն հայության մայրաքաղաքի ծառերը կտրել կամ պահպանել: Արդեն 4 օր է, ինչ Երեւանի կենտրոնում ծառերի սպանդ է, ու դիմադրում են միայն մի քանի անհատներ կամ Երեւանի ավագանու եզակի անդամներ:

ArmLur.am-ը զրուցեց քաղաքային պլանավորման մասնագետ Վիկտոր Մնացականյանի հետ, որը մեզ փաստացի ցույց տվեց, թե հին, փարթամ ծառերին ինչ ծառերով են փոխարինել, եւ ինչ է սպասվում երեւանցիներին ամռանը:

Վիկտոր Մնացականյանի հետ ArmLur.am-ը շրջայց կատարեց ծառահատված Թումանյան փողոցում՝ հետաքրքրվելով, թե ինչպես են վերաբերվում բիզնեսի ներկայացուցիչները իրենց մայթերից անհետացած մեծ ու փարթամ ծառերի ջարդին: Պարզվեց, որ անտարբերությունն ավելի մեծ էր:

Բարեբախտաբար, կային նաեւ բիզնեսի ներկայացուցիչներ, որոնք իրենց ցասումն արտահայտեցին, սակայն նրանք բացառություններ էին:

Հանդիպեցինք նաեւ քաղաքացիների, որոնք իրենց դժգոհությունն արտահայտեցին ծառերի ջարդի առիթով:

Ահա այսպես, ժողովրդավարական հռչակված երկրում միանձյա որոշմամբ իշխանությունը Արմեն Բեգոյանի ձեռամբ վերացնում է Երեւանի ինքնությունը, ձեռագիրը եւ պատմությունը:

ԱՃ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հայաստանում գրանցվել է ընտանիքում երրորդ եւ հաջորդ երեխայի ծնունդների մասով աճ:

Այս մասին ասաց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովի նիստում ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի քննարկմանը:

Ըստ նախարարի՝ վերջին տարիներին իրականացված միջոցառումները զգալի կերպով ազդում են ծնունդների կարգաթվային կառուցվածքի վրա:

«Ունենք աճ ընտանիքում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնունդների մասով: Օրինակ՝2018 թվականին ծնվել է ընտանիքում երրորդ եւ հաջորդ կարգաթվով 8271 երեխա, 2022-ին այդ թիվը կազմել է 11 հազար 956, աճը կազմել է 44.6 տոկոս: Բնականաբար, կարող ենք արձանագրել, որ մեր այս միջոցառումը տվել է դրական արդյունքներ»,- ասաց Մկրտչյանը:

2022 թվականի հունվարից գործող՝ «Ընտանիքում ծնված երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության» ծրագրի շրջանակում, 2023-ի դեկտեմբեր ամսվա տվյալներով, աջակցություն է տրամադրվել 21 հազար 804 երեխայի համար:

Նախարարը հիշեցրեց, որ 2023 թվականին վերանայվել է մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի համակարգը. նոր փոփոխությամբ խնամքի նպաստ են ստանում բոլոր մայրերը՝ անկախ աշխատել-չաշխատելու հանգամանքից:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՊՕՐԻՆԻ ԿԸՆՏՐՎԻ ԱՅԼ ԱՆՁ

2024 թվականի մարտի 29-ին՝ այսօր, կայանալու են Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի փակ ընտրությունները:

ArmLur.am-ը օրեր առաջ գրել էր, որ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին Բրյուսովի անվան պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստում փակ եւ գաղտնի քվեարկության արդյունքներով ռեկտորի պաշտոնում ձայների մեծամասնությամբ (12/8 ձայների համամասնությամբ) ընտրվել էր Կարինե Հարությունյանը: Սակայն, մրցույթում պարտված նույն Դավիթ Գյուրջինյանը դատական կարգով բողոքարկել էր մրցույթի արդյունքները՝ պահանջելով դրանք անվավեր ճանաչել: Արդյունքում մրցույթի արդյունքները՝ Կարինե Հարությունյանի ռեկտորի պաշտոնում ընտրվելու մասին, չհաստատվեցին կառավարության կողմից: Ավելին՝ Կարինե Հարությունյանը եւս դիմել էր դատարան՝ մրցույթը կայացած համարելու եւ կառավարությանը դրանց արդյունքները հաստատել պարտավորեցնելու պահանջներով: Դատական գործերը դեռեւս ընթանում են, եւ դատարանը որեւէ որոշում չի կայացրել:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հայտարարել բաց մրցույթ, երբ դատական քննությունը ավարտված չէ, եւ նախորդի արդյունքները անվավեր ճանաչված չեն:

Սա «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի ակնհայտ խախտում է:

ArmLur.am-ը ներկայացնում է այն բացառիկ փաստաթուղթը, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարար եւ Հաշվեքննիչ հանձնաժողովի նախագահ Ժաննա Անդրեասյանի ստորագրությամբ, ըստ որի՝ ռեկտորի ընտրությունում ձայների մեծամասնությամբ հաղթել է Կարինե Հարությունյանը: Կառավարությունից այս փաստաթուղթը չեն հաստատել, եւ իշխանության «սրտի» այժմյան ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանը հասել է իր ուզածին:

Ստացվում է, որ փաստացի կա ռեկտոր, սակայն ապօրինի կընտրվի այլ անձ: Այս անօրինական նշանակված ընտրություններից հետո, հնարավոր է, նաեւ հարցականի տակ դրվի վաղը ընտրվող ռեկտորի պաշտոնը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԳՄՍՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, հաշվի առնելով բարձրագույն կրթություն չունեցող մասնագետների հետագա մասնագիտական գործունեությունը եւ կարեւորելով նրանց տարիների փորձառությունը, մարտի 28-29-ին նախաձեռնել է արտահերթ կամավոր ատեստավորման գործընթաց. այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Ատեստավորման ընթացքին հետեւել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ այցելելով Հակոբ Կարապետցի անվան թիվ 6 եւ Լեւոն Միրիջանյանի անվան թիվ 155 հիմնական դպրոցներ:

Նախարարի տեղակալը շրջել է քննական սենյակներում եւ հաջողություն մաղթել ուսուցիչներին՝ հույս հայտնելով, որ նրանք դրական արդյունքներ կգրանցեն ու հաղթահարելով ատեստավորման շեմը՝ կշարունակեն մանկավարժական գործունեությունը:

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տվյալներով՝ թիվ 6 դպրոցի քննական կենտրոնում 78 հայտագրված մասնակիցներից ատեստավորմանը ներկայացել է 62-ը: Թիվ 155 դպրոցի քննական կենտրոնում հայտագրվել է 100 ուսուցիչ, որոնցից ատեստավորմանը ներկայացել է 84-ը:

Նշենք, որ կամավոր ատեստավորման թեստերը կազմվում են հանրակրթական դպրոցի ծրագրին եւ դասագրքին համապատասխանության սկզբունքով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ կամավոր ատեստավորման այս փուլը չհաղթահարելու դեպքում բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները հնարավորություն չեն ունենալու հանրակրթական դպրոցներում ուսուցչական հետագա գործունեություն իրականացնել, մինչեւ չապահովեն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով ուսուցչին ներկայացվող պահանջները:

Հիշեցնենք, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով ուսուցիչների համար դեռեւս 2010 թվականին սահմանվել է բարձրագույն կրթության պահանջ: Օրենսդրական նշված պահանջի կատարումն ապահովելու նպատակով բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչներին տրվել էր որոշակի ժամանակահատված, որը մի քանի անգամ արդեն իսկ երկարաձգվել է: Շատ ուսուցիչներ այդ ընթացքում ստացել են բարձրագույն կրթություն՝ կարգավորելով վերոնշյալ խնդիրը եւ ապահովելով օրենքի պահանջը:

Նախորդ տարի ոչ բարձրագույն կրթությամբ մասնագետներին տրվեց հավելյալ հնարավորություն՝ կամավոր ատեստավորման մասնակցության արդյունքում համապատասխան շեմը հաղթահարելու դեպքում շարունակել մասնագիտական աշխատանքը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը մշակում է աջակցության ծրագիր բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների մասնագիտական զարգացման նպատակով: Ըստ այդմ՝ ծրագրի շահառու հանդիսացող անձը, որի մասնագիտական գործունեությունը դադարեցվել է, կարող է կրթություն ստանալ ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատություններից որեւէ մեկում. պետությունը կապահովի ուսման վարձի փոխհատուցում:

Բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների 2024 թվականի կամավոր ատեստավորումը կշարունակվի նաեւ մարտի 29-ին:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԾԵՐ

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ պետական բյուջեում կատարվել է վերաբաշխում՝ ԿԳՄՍ նախարարությանը գումար հատկացնելու նպատակով:





Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Ըստ այդմ՝ հատկացված 1 մլրդ 393 մլն 405.8 հազար դրամ գումարը կուղղվի անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի եւ Հայաստանի ազգային հերոս, Ֆրանսիայի պատվո լեգեոնի շքանշանակիր, աշխարհահռչակ շանսոնիե, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակների հոբելյանական միջոցառումների պատշաճ կազմակերպմանն ու իրականացմանը:

Սերգեյ Փարաջանովի եւ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակներն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025 թթ. օրացույցում, եւ նախատեսվող հոբելյանական միջոցառումներն իրավունք ունեն հանդես գալու ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարբերանշանի ներքո: Հանճարեղ կինոռեժիսորի եւ շանսոնիեի հոբելյանները կարեւորվում են նրանց արվեստի արժեւորման, միջազգայնացման եւ ուրույն ստեղծագործական ժառանգության հանրահռչակման տեսանկյունից:

Սերգեյ Փարաջանովը թողել է բացառիկ ժառանգություն, որն այսօր մեծ հետաքրքրություն ունի աշխարհում, սակայն մինչ օրս մնում է չուսումնասիրված: Հոբելյանական տարվա համատեքստում բազմաթիվ օտարերկրյա կինոկազմակերպություններ ցանկություն են հայտնել կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված մեծ վարպետին, եւ դրանց մի մասն ընդգրկվել է հոբելյանական միջոցառումների ցանկում: Նախատեսվում են երկու տասնյակից ավելի տարաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են բացահայտելու Փարաջանով արվեստագետին, ուսումնասիրելու նրա արվեստն ու յուրօրինակ կինոժառանգությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայանալիք հոբելյանական միջոցառման շրջանակում ներկայացվելու են լուսանկարչական ցուցահանդես, «Նռան գույնը» ֆիլմը եւ ֆիլմի հատվածների ինստալյացիոն ցուցադրություն: Հոբելյանական միջոցառումների ծրագրով նախատեսված են նաեւ գիտաժողովներ, ցուցահանդեսներ, հրատարակչական, մարզային եւ կրթական ծրագրեր, Հայաստանում եւ արտերկրում ֆիլմերի ցուցադրություններ, տեսալսողական արտադրանք՝ ֆիլմ եւ ֆիլմաշար, հեռուստահաղորդում, ինչպես նաեւ հուշանվերների ստեղծում եւ տարածում:

Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի հոբելյանական տարվա շրջանակում ամբողջ աշխարհում կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված ֆրանսիական երգարվեստի ամենաազդեցիկ ու նշանավոր հայազգի երաժիշտներից մեկին: Նախատեսված է իրականացնել 16 տարաբնույթ միջոցառում, որոնք միտված են հանրահռչակելու նրա ժառանգությունը: Լեգենդար արտիստի եւ մեծ հայի 100-ամյակի շրջանակում պատրաստվել է տոնակատարությունների ընդգրկուն ծրագիր. միջոցառումներ տեղի կունենան Ֆրանսիայում, Հայաստանում եւ ամբողջ աշխարհում: Նախատեսված են համերգներ արտերկրում, Երեւանում եւ ՀՀ մարզերում, ցուցահանդեսներ, հրատարակչական ծրագրեր, ինչպես նաեւ հուշանվերների ստեղծում եւ տարածում:

«ԱՐՏԱՎԱԶԴ»

ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆԻՆ

Թատրոնի միջազգային օրվա առթիվ մարտի 27-ին Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կայացել է թատերական ոլորտի «Արտավազդ» 23-րդ մրցանակաբաշխությունը: Այն նվիրված էր ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Ջիգարխանյանի հիշատակին:

«Լավագույն ռեժիսուրա» մրցանակին արժանացել է Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնից Լյուդվիգ Հարությունյանի «Ինկած բերդի իշխանուհին» ներկայացումը, որը ճանաչվել է նաեւ «Լավագույն ներկայացում»:

«Լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում հաղթել է Տիգրան Գաբոյանը՝«Ինկած բերդի իշխանուհին» ներկայացման մեջ Քեսունի Վասիլ Իշխանին մարմնավորելու համար, «Լավագույն կին դերակատար» անվանակարգում հաղթել է Արաքսյա Մելիքսեթյանը՝ «Շղթա» բեմադրության հերոսուհուն՝ Աննա Մարկոսյանին մարմնավորելու համար:

«Երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում հաղթել է Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի դերասան Վարդան Կուզիանոսյանը՝ «Գիշատիչների խնջույքը» ներկայացման շրջանակում Կաուբախի կերպարը մարմնավորելու համար, իսկ «Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար» է ճանաչվել Նառա Սանթոյանը՝ «Ինկած բերդի իշխանուհին» ներկայացման հերոսուհի Սաբեթին մարմնավորելու համար:

Խստորեն ներկայացնում ենք մրցանակակիրներին.

«Լավագույն սցենոգրաֆիա» - Կարեն Գրիգորյան, «Փոքրիկ ողբերգություններ»

«Լավագույն զգեստների նկարիչ» - Մերի Սարգսյան, «Փոքրիկ ողբերգություններ»

«Լավագույն լուսային նկարիչ» - Հակոբ Պողոսյան, «Ինկած բերդի իշխանուհին»

«Լավագույն երաժշտության հեղինակ» - Վաչե Շարաֆյան, «Կոլոմբինա»

«Լավագույն պիես» - «Պատերազմի ցեցը», Արմինե Բոյաջյան եւ Նարեկ Մանուչարյան

«Լավագույն թատերախոսական» - «Գերագույն երկրպագուն», Սուսաննա Բրիկյան

«Լավագույն երիտասարդ դերասան» - Անդրանիկ Միքայելյան

«Լավագույն երիտասարդ դերասանուհի» - Անուշ Զանգիզորյան

«Լավագույն երիտասարդ բեմադրիչ» - Ժորա Մարտիրոսյան, «B 1427»

«Լավագույն մանկական ներկայացում» - «Փայլոու»

«Լավագույն երիտասարդական ներկայացում» - «Տունը սահմանին», Արտուշ Միքայելյան

«Լավագույն պլաստիկական ներկայացում» - «Սիրո պատմություն Նյու Յորքում», Արտյում Գեւորգյան

«Լավագույն կամերային ներկայացում» - «Գիշատիչների խնջույքը», Աշոտ Հակոբյան:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՎՐՈ–2024

Հայտնի են ֆուտբոլի Եվրո-2024-ի եզրափակիչ փուլի բոլոր մասնակիցները: Վերջին ուղեգրերը նվաճեցին Վրաստանի, Ուկրաինայի եւ Լեհաստանի հավաքականները:

A խումբ. Գերմանիա, Շոտլանդիա, Հունգարիա, Շվեյցարիա:

B խումբ. Իսպանիա, Խորվաթիա, Իտալիա, Ալբանիա:

C խումբ. Սլովենիա, Դանիա, Սերբիա, Անգլիա:

D խումբ. Լեհաստան, Նիդերլանդներ, Ավստրիա, Ֆրանսիա:

E խումբ. Բելգիա, Սլովակիա, Ռումինիա, Ուկրաինա:

F խումբ. Թուրքիա, Վրաստան, Պորտուգալիա, Չեխիա:

Եվրո-2024-ը կանցկացվի 2024թ. հունիսի 14-ից հուլիսի 14-ը Գերմանիայի 10 քաղաքներում:

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ Է

Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» հարձակվող Մարկուս Ռեշֆորդի մասնակցությունը Եվրո-2024-ին հարցականի տակ է: Անգլիայի ազգային թիմի գլխավոր մարզիչ Գարեթ Սաութգեյթը գոհ չի եղել Ռեշվորդի մարզավիճակից եւ խաղից ընկերական հանդիպումներում: Նա չի երաշխավորել Ռեշֆորդի մասնակցությունը ամռանը Գերմանիայում անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը. հաղորդում է բրիտանական The Telegraph-ը:

Եվրո-2024-ի մասնակից թիմերը իրավունք ունեն հայտավորել 23 խաղացողի:

Նախորդ երկու ընկերական հանդիպումներում Ռեշֆորդը խաղադաշտում անցկացրել է 15 րոպե՝ փոխարինման դուրս գալով Բրազիլիայի թիմի դեմ խաղում (0:1):

Անգլիայի ընթացիկ առաջնությունում Ռեշֆորդը մասնակցել է 27 հանդիպման, խփել է 7 գոլ, կատարել 2 գոլ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԳԼԽԱՎՈՐԵԼ

Իտալական «Ռոմայից» հեռացված Ժոզե Մոուրինյոն ցանկանում է գլխավորել ազգային հավաքական: Պորտուգալացի մասնագետը մտադիր է ամռանը վերսկսել մարզչական աշխատանքը:

«Երկու անգամ հնարավորություն եմ ունեցել գլխավորել Պորտուգալիայի հավաքականը: Առաջին անգամ եղել է, երբ մարզում էի Մադրիդի «Ռեալը», բայց Ֆլորենտինո Պերեսն արգելեց: Երկրորդ անգամ այդպիսի հնարավորություն կար անցած ամռանը՝ «Ռոմայից» հեռացվելուց մի քանի ամիս առաջ, բայց չեմ ափսոսում:

Ազգային թիմ մարզելն իմ նպատակն է: Հնարավոր է՝ որեւէ հավաքական ընդունեմ աշխարհի առաջնությունից, Եվրո-2024-ից կամ Ամերիկայի գավաթից Աֆրիկայի գավաթից առաջ: Տեսնենք, երկու տարի սպասելու մտադրություն չունեմ»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է twitter.com/FabrizioRomano-ն:

Մոուրինյոն մարզչական կարիերայի ընթացքում գլխավորել է «Բենֆիկան», «Լեյրիան», «Պորտուն», «Ինտերը», «Ռեալը», «Չելսին», «Մանչեսթեր Յունայթեդը», «Տոտենհեմը», «Ռոման»:

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:
Աննա Ստեփանյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:
Արամ Գաբրիելյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հնագետները ժամանակակից Նախիջեւանի տարածքում պեղումների արդյունքում հայտնաբերել են 4,000 տարի առաջ ապրած հին «ամազոնուհիների»՝ կին մարտիկների գերեզմաններ, որոնք թվագրվում են բրոնզե դարաշրջանին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 + 8 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 +12 + 13
Գեղարքունիք	- 3 - 6 + 6 + 9
Լոռի	- 1 + 3 +11 + 13
Տավուշ	- 1 + 2 +13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +12 + 15

Արարատ	+ 2 + 5 +15 + 17
Արմավիր	+ 1 + 4 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +15 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15
ԼՂՀ	- 1 + 3 +10 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.3.2024**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*